04.06.2020թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

**ՈՐՈՇՈՒՄ թիվ 426418/04**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտումների վերաբերյալ 04.06.2020 թվականի թիվ 19/37 գործը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Գևորգ Մովսիսյանը (ՀՎՀՀ՝ 49592277, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա թղմ. 5, 46) համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 134 հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել 2019թ-ի շահութահարկի հաշվարկը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1]հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Գևորգ Մովսիսյանը մեկ տարվա ընթացքում չի կատարել իրավախախտում, սույն գործով դիտվում է պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով,33-րդ հոդվածով, 244[2], 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասի՝ Գևորգ Մովսիսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 10.000 (տասը հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
STATE REVENUE COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA
ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ ДОХОДОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
02647

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____